

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆԻ ՄՈՏ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-ԻՆ, ԺԱՄԸ 9:30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

Մասնակցությամբ՝

- ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝ Արամ Հովհաննիսյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Խաչատուր Մկրտչյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Արման Խաչատրյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Սերյոժա Գրիգորյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի օգնական՝ Անի Խաչատրյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի օգնական՝ Աննա Սիմոնյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների
- ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ՝ Տաթևիկ Մկրտչյանի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում առկա մի շարք հրատապ և ընթացիկ խնդիրների քննարկում

Քննարկվեցին՝

Հարց 1. Հայաստանի Հանրապետության վարչապետի Արմավիրի մարզ կատարելիք արտագնա խորհրդակցության շրջանակներում ներկայացվելիք Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի հաշվետու զեկույցի սահիկաշարի ձևաչափով կազմման աշխատանքների ընթացքի մասին

/ Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ – Դավիթ Խուրաթյան/

Հանձնարարական՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Լիլիթ Մուշեղյանին և անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ Տաթևիկ Մկրտչյանին՝

ա/ ապահովել Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2024 թվականի հունվարի 18-ի N 02/12.63/2007-2024 և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի հունվարի 19-ի N ԳՍ/15.2/12.63/1888-2024 գրությունների պահանջների ամբողջական կատարումը և համապատասխան ձևաչափով լրամշակված սահիկաշարը սահմանված ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Ժամկետ՝ 01.03.2024թ.:

Հարց 2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2024 թվականի առաջին եռամսյակի աշխատանքային ծրագրի կատարման ընթացքի մասին

/ Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ – Դավիթ Խուրաթյան/

Հանձնարարական՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Գոռ Հովհաննիսյանին՝

ա/ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում 2024 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքային ծրագրի առնչությամբ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 2530-Ա հրամանում կատարված համապատասխան փոփոխությունը, սահմանված ժամկետում ապահովել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքում իրականացվող իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքները և արդյունքները ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

Ժամկետ՝ 29.03.2024թ.:

Հարց 3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում կարմրուկի առումով իրավիճակի կայունացման և հետագա դեպքերի տարածման կանխարգելումն ապահովելու անհրաժեշտ միջոցառումների մասին

/ Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ – Դավիթ Խուրաթյան/

Հանձնարարական՝

1. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի 26.02.2024թ. NՎԳ704/5628–2024 գրությամբ ներկայացված տեղեկատվությունը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում կարմրուկի առումով իրավիճակի կայունացումը և հետագա դեպքերի տարածումը կանխարգելու նպատակով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի

աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ասթինե Ապիտոնյանին՝

ա/ ամենօրյա վերահսկողությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ղեկավարների առաջնահերթ խնդիրը համարել՝ ապահովելու Առողջապահության նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 30-Ն (հղում՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=178899>), Առողջապահության նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 35-Ն (հղում՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=189093>), ինչպես նաև Առողջապահության նախարարի 2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 3847-Լ (հղում՝ <https://www.moh.am/images/legal-463.pdf>) հրամանների պահանջների պարտադիր կատարումը,

բ/ կատարված աշխատանքների վերաբերյալ ամենօրյա պարբերականությամբ տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝

2024-02-27 17:34:22 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից



ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

Արձանագրող՝ ՀՀ Արմավիրի մարզպետի
աշխատակազմի անձնակազմի կառավարման,
փաստաթղթաշրջանառության և հասարակայնության
հետ կապերի վարչության
պետ՝ Դավիթ Դավթյան